

ԱՆՅՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Բանկի կողմից վարկ, վարկային գիծ, օվերդրաֆտ և երաշխիք ստանալու համար
Հաճախորդը (ելնելով վերջինիս կազմակերպատիրավական ձևից) Բանկին
ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

ա) իրավաբանական անձանց համար

- Դիմում-հայտ Բանկի Վարչության նախագահի (Մասնաճյուղի կառավարիչի) անունով, որտեղ նշվում է պահանջվող վարկի, (վարկային գիծ, օվերդրաֆտի սահմանաչափերը) կամ երաշխիքի գումարը, արժույթը, ժամկետը, ընդունելի տոկոսադրույքը, նպատակը, վերադարձե-լիության ապահովման միջոցը, վարկի ստացման եղանակը (կանխիկ կամ անկանխիկ):

Վարկային հայտը պետք է կնքված և ստորագրված լինի ընկերության տնօրենի, գլխավոր հաշվապահի կողմից,

- Ձեռնարկվելիք գործունեության մանրամասն ծրագիր (տեխնիկատնտեսական հիմնավորում)՝ կարված և կնքված վիճակում, որը պետք է պարունակի վարկի օգտագործման նպատակը, տվյալ գործունեության արդյունքում սպասվող եկամուտներն ու ծախսերը (կատարված և կատարվելիք), կանխատեսվող շահույթի հաշվարկը, վարկի և դրա տոկոսագումարների մարման աղբյուրները, ժամկետները և հիմնավորվածությունը, ծրագրով նախատեսված գործարքներին վերաբերվող (կամ դրանք հաստատող) փաստաթղթեր (պայմանագրեր, համաձայնագրեր, մտադրությունների հուշագրեր, վճարային հանձնարարագրեր կամ պահանջագրեր, հաշիվ-ֆակտուրաներ, ակտեր և այլն),

- Կազմակերպության իրավաբանական փաստաթղթերի (կանոնադրություն, պետական ռեգիստրի կողմից տրված վկայական) պատճենները,

- Բաց Բաժնետիրական Ընկերության համար՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրված, Փակ Բաժնետիրական Ընկերության համար՝ բաժնետերերի ռեեստր վարողի կողմից տրված, ՍՊ Ընկերության դեպքում ռեգիստրից տրված տեղեկանք հիմնադիրների (բաժնետերերի) վերաբերյալ, ինչպես նաև տեղեկանք, կազմակերպության կանոնադրական կապիտալում 10% և ավել մասնակցություն ունեցող ֆիզիկական անձ հանդիսացող մասնակիցների անձնագրի պատճենները, իրավաբանական անձ հանդիսացող մասնակիցների կանոնադրությունը, ռեգիստրի վկայականը, տնօրենի նշանակման որոշումը կամ հրամանը, տնօրենի անձնագրի պատճեն,

- Հաճախորդի հաշվեկշիռը, ֆինանսական հաշվետվությունները (համաձայն ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատված ձևերի) վերջին հաշվետու ժամանակահատվածի համար՝ հաստատված պետական հարկային տեսչության կողմից, հարկային տեսչության վերջին ստուգման ակտը, ինչպես նաև (ցանկացած դեպքում) Հայաստանի Հանրապետության պետբյուջեի նկատմամբ վերջին հաշվետու ժամանակահատվածի համար պարտքի վերաբերյալ հարկային տեսչության կողմից տրված տեղեկանք,

- Տեղեկանք Հաճախորդի Սոցիալական Ապահովագրության Հիմնադրամի հանդեպ ունեցած պարտավորությունների վերաբերյալ,

- Վերադաս կամ իրավասու մարմնի արձանագրություն՝ վարկի համար դիմելու, և գրավադնելու վերաբերյալ,

- Վերադաս կամ իրավասու մարմնի կողմից ղեկավարների նշանակման որոշումներն և հրամանները, ղեկավարների անձնագրի պատճենները

- Հաճախորդի դեբիտորների և կրեդիտորների ցուցակը, գումարների չափերը, ձևավորման և վերադարձման ժամկետները (հաստատված իրավասու մարմինների կողմից),

- Որպես վարկի կամ երաշխիքի վերադարձելիության ապահովման միջոց առաջարկվող գրավի ցանկը և մանրամասն նկարագիրը /առկայության դեպքում/,
- Գրավի առարկայի ծագումն ու դրա նկատմամբ սեփականության, ինչպես նաև այլ իրավունքներ հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում):
- անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ սեփականության վկայական (պատճե), տեղեկանք ԲՇՏ-ից գրանցված անձանց վերաբերյալ, /եթե գրավատուն ֆիզիկական անձ է/, տեղեկանք Անշարժ գույքի կադաստրից արգելանքների վերաբերյալ:
- Գրավի առարկայի ապահովագրման հիմքերը (առկայության դեպքում)
- հաշվարկային հաշիվների քաղվածքներ
- Այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնց անհրաժեշտությունը որոշում է բանկը:

բ) ֆիզիկական անձանց համար

- Դիմում-հայտ Բանկի Վարչության նախագահի (Մասնաճյուղի կառավարիչի) անունով, որտեղ նշվում է պահանջվող վարկի (վարկային գծի, օվերդրաֆտի սահմանաչափերը) կամ երաշխիքի գումարը, արժույթ, ժամկետը, ընդունելի տոկոսադրույքը, նպատակը, վերադարձելիության ապահովման միջոցը, վարկի ստացման եղանակը (կանխիկ կամ անկանխիկ), վարկային հայտը պետք է ընդգրկի վարկի օգտագործման նպատակի նկարագիրը, վարկի, վարկային գծի և օվերդրաֆտի և դրա տոկոսագումարների մարման աղբյուրները, ժամկետները և հիմնավորվածությունը,
- Հաճախորդի անձնագրի պատճեն
- Տեղեկություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում 10% և ավել մասնակցության վերաբերյալ
- Որպես վարկի կամ երաշխիքի վերադարձելիության ապահովման միջոց առաջարկվող գրավի ցանկը և մանրամասն նկարագիրը (առկայության դեպքում),
- Գրավի առարկայի ծագումն ու դրա նկատմամբ սեփականության, ինչպես նաև այլ իրավունքներ հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում):
- անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ սեփականության վկայական (պատճե), տեղեկանք ԲՇՏ-ից գրանցված անձանց վերաբերյալ, տեղեկանք Անշարժ գույքի կադաստրից արգելանքների վերաբերյալ:
- Գրավի առարկայի ապահովագրման հիմքերը (առկայության դեպքում)
- Այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնց անհրաժեշտությունը որոշում է Բանկը:

գ) անհատ ձեռնարկատերի համար

- Դիմում-հայտ Բանկի Վարչության նախագահի (Մասնաճյուղի կառավարիչի) անունով, որտեղ նշվում է պահանջվող վարկի (վարկային գծի, օվերդրաֆտի սահմանաչափերը) կամ երաշխիքի գումարը, արժույթը, ժամկետը, ընդունելի տոկոսադրույքը, նպատակը, վերադարձելիության ապահովման միջոցը, վարկի ստացման եղանակը (կանխիկ կամ անկանխիկ): Վարկային հայտը պետք է կնքված և ստորագրված լինի ԱԶ կողմից

- Հաճախորդի անձնագրի պատճեն
- Ձեռնարկվելիք գործունեության մանրամասն ծրագիր (տեխնիկատնտեսական հիմնավորում) կարված և կնքված վիճակում, որը պետք է պարունակի վարկի օգտագործման նպատակը, տվյալ գործունեության արդյունքում սպասվող եկամուտներն ու ծախսերը (կատարված և կատարվելիք), կանխատեսվող շահույթի հաշվարկը, վարկի և դրա տոկոսագումարների մարման աղբյուրները, ժամկետները և հիմնավորվածությունը, ծրագրով նախատեսված գործարքներին վերաբերվող (կամ դրանք հաստատող) փաստաթղթեր (պայմանագրեր, համաձայնագրեր, մտադրությունների հուշագրեր, վճարային հանձնարարագրեր կամ պահանջագրեր, հաշիվ-ֆակտուրաներ, ակտեր և այլն),
- Իրավաբանական փաստաթղթերի (պետական ռեգիստրի կողմից տրված վկայական) պատճենները,
- Տեղեկանք իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում 10% և ավել մասնակցության վերաբերյալ
- Հաճախորդի կողմից վերջին հաշվետու ժամանակահատվածի համար՝ պետական հարկային տեսչություն ներկայացված հաշվետվություններ, հարկային տեսչության վերջին ստուգման ակտը, ինչպես նաև (ցանկացած դեպքում) Հայաստանի Հանրապետության պետբյուջեի նկատմամբ վերջին հաշվետու ժամանակահատվածի համար պարտքի վերաբերյալ հարկային տեսչության կողմից տրված տեղեկանք,
- Տեղեկանք Հաճախորդի Սոցիալական Ապահովագրության Հիմնադրամի հանդեպ ունեցած պարտավորությունների վերաբերյալ,
- Տեղեկություն այլ անձանց նկատմամբ պարտքերի և պահանջների վերաբերյալ, գումարների չափերը, ձևավորման և վերադարձման ժամկետները,
- Որպես վարկի կամ երաշխիքի վերադարձելիության ապահովման միջոց առաջարկվող գրավի ցանկը և մանրամասն նկարագիրը (առկայության դեպքում),
- Գրավի առարկայի ծագումն ու դրա նկատմամբ սեփականության, ինչպես նաև այլ իրավունքներ հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում):
- Գրավի առարկայի ապահովագրման հիմքերը (առկայության դեպքում)
- անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ սեփականության վկայական (պատճեն), տեղեկանք ԲՇՏ-ից գրանցված անձանց վերաբերյալ, տեղեկանք Անշարժ գույքի կադաստրից արգելանքների վերաբերյալ:
- հաշվարկային հաշիվների քաղվածքներ (վերջին 6-12 ամիսների համար)
- Այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնց անհրաժեշտությունը որոշում է Բանկը:

Հաճախորդը պետք է ներկայացնի նշված փաստաթղթերի բնօրինակները կամ սահմանված կարգով վավերացված պատճենները:

Միջազգային կամ այլ ֆինանսական կազմակերպությունների ծրագրերով Նպատակային վարկավորում իրականացնելու համար Բանկի կողմից հաճախորդից /իրավաբանական անձ/ կարող է պահանջվել նաև

- գործունեության ծավալման համապատասխան լիցենզիա,

- շրջակա միջավայրի վրա գործունեության ազդեցության փորձաքննության եզրակացությունը: